ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մարիամ Մասիսի Հարությունյան

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Լիանա Հայկազի Գրիգորյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Վարդան Սամվելի Ալեքսանյան

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-Ռուսական Համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 20-ին, ժամը 14:00, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող թիվ 014 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցե՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունիսի 17-ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ **Տ. Ս. Մարտիրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Կյանքի որակը բնորոշում է մարդու գոյության և կյանքի բոլոր կողմերը, հանդիսանալով սոցիալ-տնտեսական, զարգացման հիմնական նախադրյալ, ինչպես նաև մարդկային զարգացման ցուցիչ, հասարակական կյանքի բազում ոլորտների համատեղ զարգացման արդյունք, ունենալով հիմնորոշող նշանակություն մարդկային գոյության ընկալման և դրսևորման համար:

Բնակչության կյանքի որակի ուսումնասիրությունը համարվում է սոցիալ-տնտեսական գիտության ամենատարածված ուղղություններից: Այս ժամանակահատվածում բնակչության կյանքի որակի բարձրացման հիմնախնդիրները գտնվում են գիտնականների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: Պետությունների զարգացման մակարդակը նախատեսվել է այլևս չչափել միայն ՀՆԱ-ով կամ տնտեսական աճի տեմպերով. առաջնային կարևորություն են ստացել այնպիսի ցուցանիշներ, որոնք արտահայտում են մարդու բարեկեցության իրական դրսևորումը, առողջապահական ու կրթական հնարավորությունները, սոցիալական ապահովվածությունը:

Վերջին տասնամյակում գրեթե ամբողջ աշխարհում տնտեսական աճի բարձր տեմպերը չեն նպաստել կյանքի որակի մակարդակի բարձրացմանը, աղքատության կրճատմանը, այլ ընդհակառակը նկատվում է աղքատության խորացման միտումներ: Իրականում պատկերը հետևյալն է, որ սոցիալ-տնտեսական զարգացման առումով առաջատարներ են ոչ թե տնտեսական աճի բարձր տեմպեր ունեցող երկրները, այլ նրանք, որոնք ունեն կրթության, գիտության, առողջապահության և մշակույթի զարգացվածության բարձր մակարդակ: Հետևաբար, անհրաժեշտ է տնտեսական աճը ուղղել բնակչության կյանքի որակի վերարտադրությանը:

Վերջին տարիներին Հայաստանում տնտեսական աճը չի նպաստել կյանքի որակի բարելավմանը: Նվազագույն աշխատավարձի և սպառողական զամբյուղի միջև առկա են անհամաչափ դրսևորումներ, որոնք իրենց հետքն են թողնում եկամուտների վերաբաշխման համակարգի վրա: Չնայած հարուստ խավի մոտ արձանագրված մասնաբաժնի նվազման, այս խավը շարունակում է տնօրինել երկրում բնակչության եկամուտների կեսից ավելին՝ պահպանելով եկամուտների գերակայությունը: ՀՀ-ում միջին խավն ունի խոցելի և ոչ կայուն դիրքավորում: Միջին խավի դրամական եկամուտների մասնաբաժնի ավելացումը նախապայման է հանդիսանում արժանավայել կենսամակարդակ, կայուն եկամուտներ, առողջապահություն և մատչելի կրթություն ունենալու, ինչպես նաև տնտեսական ակտիվության խթանման և դրա մասնակիցը դառնալու համար: Հետևաբար անհրաժեշտ է գործիքակազմի մշակում որոշակի քաղաքականությամբ, որը կնպաստի հասարակությունում միջին խավի ձևավորմանը և եկամուտների բաշխման հավասարակշռմանը՝ միաժամանակ հասնելով տնտեսական և սոցիալական քաղաքականությունների արդյունավետ իրականացման:

ՀՀ-ում կյանքի որակի և այլ երկրների շարքում իր դիրքերի բարելավման համար, հաշվի առնելով երկրի տնտեսական, սոցիալական և մշակութային առանձնահատկությունները և միջազգային ասպարեզում ձևավորված գնահատականները, անհրաժեշտ է կյանքի որակի կառավարման համակարգերի ուսումնասիրություն և նոր կառուցակարգերի տեղայնացում:

Վերը նշվածը հիմնավորում է կյանքի բարձր որակի դերի և ազդեցության բացահայտման անհրաժեշտությունը և այս հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ՀՀ բնակչության կյանքի որակի կառավարման գործընթացում առկա հիմնախնդիրների լուծման համար կիրառվող մոտեցումների վերլուծությունն ու դրանց բարելավման ուղիների բացահայտումը: Դրված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել կյանքի որակի տեսական սկզբունքները և մեթոդաբանական հիմքերը,
- վերլուծել Հայաստանի Հանրապետությունում բնակչության կյանքի որակը բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշները և դրանց դինամիկան, բացահայտել դրանց կարգավորման հնարավոր եղանակները,
- ուսումնասիրել և համեմատական վերլուծության ենթարկել կյանքի որակի գնահատման միջազգային չափանիշներն ու բազմաբնույթ մոտեցումները,
- բացահայտել եկամուտների բաշխման և բնակչության սոցիալական շերտավորման կառուցվածքային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, ներկայացնել՝ կարգավորման կառուցակարգերը,
- բացահայտել կյանքի որակի վրա սոցիալ-տնտեսական փոփոխությունները պայմանավորող գործոնները բազմաչափ վերլուծության միջոցով՝ վեր հանելով կառավարման ենթակա առկա հիմնախնդիրները,
- մշակել կյանքի որակի գնահատման նոր մոդել՝ համաթվի կառուցման միջոցով,
- գնահատել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը պայմանավորող գործոնների ազդեցությունը բնակչության կյանքի որակի վրա,
- մշակել քաղաքականություն իրականացնողներին ուղղված՝ ՀՀ բնակչության կյանքի որակի բարելավման հիմնական ուղիներ, և պետական կարգավորման կառուցակարգեր:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ բնակչության կյանքի որակի ձևավորման և կառավարման գործընթացն է, իսկ առարկան՝ ՀՀ բնակչության կյանքի որակի վրա ազդող սոցիալ-տնտեսական գործոնների փոխազդեցության կառուցակարգերը:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքը ձևավորվել է տնտեսագիտության տեսության, կյանքի որակի գնահատման և բարեկեցության վերաբերյալ դասական ու ժամանակակից մոտեցումների վրա: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ

կենտրոնական բանկի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի (UNDP), Համաշխարհային բանկի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD), Եվրոպական միության կողմից մշակված հրապարակումները, տվյալների շտեմարանները և բազաները, հետազոտողների աշխատանքները, և միջազգային վիճակագրական մի շարք կառույցների վերլուծական նյութերը: Վերլուծության են ենթարկվել նաև գիտական հոդվածներ, մենագրություններ ու վերլուծական զեկույցներ, որոնք վերաբերում են կյանքի որակի գնահատման և կառավարման տեսական ու գործնական խնդիրներին:

Հետազոտությունը հիմնված է համակարգային, կառուցվածքային և համեմատական վերլուծության մեթոդների վրա, որոնք թույլ են տալիս բացահայտել կյանքի որակի վրա ազդող գործոնների փոխազդեցության օրինաչափությունները: Տվյալների քանակական մշակման համար կիրառվել են վիճակագրական մեթոդներ, ժամանակային շարքերի ուսումնասիրություն, բազմաչափ կլաստերային, ռեգրեսիոն և գործոնային վերլուծություն, որոնք հնարավորություն են տալիս կազմել բնակչության կյանքի որակի համաթիվը, դրա միջոցով վերլուծել տարբեր քաղաքներում բնակչության կենսամակարդակը, բացահայտել կյանքի որակի դինամիկան, առաջարկել կառավարման կառուցակարգեր:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Հետազոտական աշխատանքում արված վերլուծությունների արդյունքներն ունեն մեթոդական, ներառական և կիրառական նշանակություն, որոնց հիմնական արդյունքներն ու գիտական նորույթներն արտացոլվել են հետևյալ հիմնական դրույթներում.

- Մշակվել է գնաճի մակարդակի վերահսկման և պատասխանատվության համատեղ կառավարման մոդել՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված գնաճի և փաստացի մակարդակների համեմատության արդյունքում արձանագրված զգալի շեղումներից, որի դեպքում նախատեսվել է պատասխանատվություն այն անձանց նկատմամբ, ովքեր նպաստել են այս հիմնախնդրի առաջացմանը:
- Ռեգրեսիոն վերլուծության միջոցով կառուցվել է մոդել՝ կանխատեսելու ՀՀ ՀՆԱ-ի աճի տեմպը՝ ռուս-ուկրաինական պատերազմի ՀՀ տնտեսության վրա 2022 թ.-ից հետո ունեցած դրական շոկերի բացակայության պայմաններում:
- Կլաստերային վերլուծության միջոցով խմբավորված քաղաքներում բացահայտվել են դրանց միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները՝ պայմանավորված ապրանքների և ծառայությունների սպառման ու գնային ինդեքսների տարբերություններով, որպես կառավարման կառուցակարգ դիտարկվել է տարբերակված մոտեցում տարածքային զարգացման քաղաքականության մեջ՝ ուղղված ցածր գնային կլաստերում ընդգրկված քաղաքներում աշխատատեղերի ստեղծման և տնտեսական ակտիվության բարձրացման անհրաժեշտությանը:
- մշակվել է կյանքի որակի գնահատման համաթիվ, հիմնված 3 ոլորտներից ընտրված 24 ցուցանիշների հիման վրա՝ միավորելով միջազգային մասշտաբով

և ՀՀ-ում առավել հաճախ օգտագործվող տարբեր մեթոդաբանական մոտեցումները: Համաթիվը կարող է օգտագործվել ինչպես ՀՀ, այնպես էլ ուսումնասիրված 100 երկրների բնակչության կյանքի որակի գնահատման համար (կշիռների փոփոխման պարագայում):

Հետազոտության արդյունքների տեսական և գիտագործնական նշանակությունը: Հետազոտությամբ ստացված արդյունքները կարող են կիրառվել պետական կառավարման համակարգում՝ կյանքի որակի բարելավմանն ուղղված ծրագրերի, ռազմավարությունների, քաղաքականությունների մշակման և ձևավորման գործընթացում: Իսկ մշակված առաջարկությունները հնարավորություն են տալիս պետական կառավարման մարմիններին իրականացնել տնտեսական և սոցիալական քաղաքականության ճշգրտումներ՝ ուղղված բնակչության եկամուտների բաշխման հավասարակշռմանը, սոցիալական պաշտպանությանը և կենսամակարդակի բարելավմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ «Կառավարման» ամբիոնում: Հետազոտության արդյունքները ներկայացվել են ՀՀ կենտրոնական բանկում 2023 թ.-ին կազմակերպված հետազոտական մրցույթի շրջանակներում՝ դառնալով 3-րդ անվանակարգում հաղթող[1], ինչպես նաև տարբեր միջազգային հարթակներում կազմակերպված հանդիպումներում: Ստացված գիտական արդյունքները ներկայացվել են 7 գիտական հոդվածներում՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ընդունելի պարբերականներում:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 177 էջի վրա (առանց հավելվածների), ներառում է 15 գծապատկեր և 37 աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ «Կյանքի որակը որպես սոցիալ-տնտեսական կատեգորիա» գլխում իրականացվել է կյանքի որակի տեսական սկզբունքների և մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրություն, վերլուծվել են Հայաստանի Հանրապետությունում բնակչության կյանքի որակը բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշները, դրանց դինամիկան: Այս գլխում անդրադարձ է կատարվել կյանքի որակի գնահատման միջազգային չափանիշներին ու բազմաբնույթ մոտեցումներին: Ներկայացվել է Հայաստանում կյանքի որակի և տնտեսական զարգացման փոխկապվածությունը 2015-2024 թվականներին՝ հիմնվելով ժողովրդագրական, ֆինանսական, սոցիալական, առողջապահական և մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Ուսումնասիրվել է եկամուտների բաշխման և բնակչության սոցիալական

[1] Իսահակ Իսահակյանի անվան հետազոտական մրցույթի արդյունքներ /Ոչ ուսանող անվանակարգ https://old.cba.am/AM/pmessagesannouncements/Isahakyan_stipendy_27.12.2023.pdf [մուտքի օր՝ 10.06.2025]

շերտավորման կառուցվածքային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, ներկայացվել՝ կարգավորման կառուցակարգերը:

«Կյանքի որակ» հասկացության բազմաբովանդակության պատճառով այն ամբողջությամբ ընկալելու համար ներկայացվել է կյանքի որակը և չափանիշների փոխազդեցությունը բացահայտող մոդելը: Գծապատկեր 1-ում ներկայացված է կյանքի որակը բնորոշող ոլորտները՝ համապատասխան օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշներով (O-օբյեկտիվ, U-սուբյեկտիվ): Դիտարկելով և ընդհանրացնելով կյանքի որակի վերաբերյալ տեսաբանների կողմից առաջարկած սահմանումները և տարաբնույթ մեկնաբանումները, հեղինակի կողմից առանձնացվել է կյանքի որակը հակիրճ բնութագրող գծապատկեր՝ այն ընդհանրացնելով համապատասխան սահմանմամբ:

Կյանքի որակը անհատի և հասարակության բարեկեցությունը բնութագրող բազմաչափ ինտեգրալ ցուցանիշ է, որն արտացոլում է առանցքային համարվող ոլորտների (սոցիալական, տնտեսական, կրթական, և այլ) օբյեկտիվ պայմանների և դրանցից անհատի սուբյեկտիվ բավարարվածության համադրությունը: Իսկ *կյանքի որակի կառավարումը* համակարգային, նպատակաուղղված և շարունակական գործընթաց է, որի միջոցով համայնքները, ինստիտուտները և պետությունը, պլանավորում, կազմակերպում, վերահսկում և բարելավում են հասարակության կյանքի որակի առանցքային համարվող ոլորտները՝ ապահովելով օբյեկտիվ պայմանների զարգացում և բնակչության սուբյեկտիվ բավարարվածության բարձրացում:

Գծապատկեր 1. Կյանքի որակի բնութագրման ամբողջական մոդել[2]

[2] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

Կայուն և արդար հասարակությունը բնորոշելու համար, նշվում է, որ այն ձևավորվում և հաստատվում է բնակչության եկամուտների և ծախսերի արդար բաշխման սկզբունքի հիման վրա, որի իրականացումը հանրային քաղաքականության հիմնական առանցքն ու ուղղությունն է: Մասնագետները ժամանակակից քաղաքակիրթ հասարակության կառուցվածքը ներկայացնում են հետևյալ մոտարկմամբ՝ աղքատները կազմում են հասարակության՝ 14-15%-ը, հարուստները՝ 5-6%-ը, իսկ միջին խավը՝ 80%- ը[3]: Տնային տնտեսությունների համար դիտարկվել է խմբավորման մեթոդը՝ նպատակ ունենալով ուսումնասիրել բաշխման մասով անհավասարությունները, հաշվի առնելով մակարդակները ըստ նյութական բարեկեցության: Այդ իսկ նպատակով դիտարկվել է դեցիլային խմբավորման մեթոդը, որտեղ տնային տնտեսությունները դասակարգվում և առանձնանում են դեցիլների կամ դեցիլային խմբերի: Վերոնշյալ մեթոդաբանությամբ դասակարգումն իրականացվել է հիմք ընդունելով սպառողական ծախսը կամ դրամական եկամուտը, որոնք սկզբնապես դասակարգվում են աճման կարգով, այնուհետև բաժանվում 10 հավասար դեցիլների կամ խմբերի: Դրամական եկամուտների առաջարկվող մեթոդաբանությամբ բաշխման դեպքում կունենանք հետևյալ արդյունքը.[4]

Աղյուսակ 1

ՀՀ բնակչության դրամական եկամուտների բաշխումը ըստ 3 խմբերի, 1996-2024 թթ.,%[5]

Բնակչության խմբեր	Բնակչության մեկ շնչի հաշվով դրամական եկամուտը													
	1996	1999	2001	2005	2010	2015	2018	2019	2020	2021	2022	2023[6]	2024	1996-2024 միջին
Աղքատ	4.4	4.9	8.5	12.5	11.5	10.5	11.0	12.0	11.5	12.9	13.6	13.7	14.2	10.9
Միջին	22.7	23.5	26.5	35.0	31.0	32.5	34.0	34.0	33.0	27.3	27.9	27.7	28.0	29.5
Հարուստ	72.9	71.6	65.0	52.5	57.5	57.0	55.0	54.0	55.5	59.8	58.5	58.6	57.9	59.7

[3] Россия: Социальная стратификация современного российского общества. — М.: «Журнал Эксперт», 2006 — 680с., с. 15 15 [последний визит: 25.01.2026]

[4] Markosyan A., Markosyan M., Some Issues of Middle-Class Formation in the Republic of Armenia. Messenger of ASUE, 3(75), 35-49. DOI:10.52174/1829-0280_2023.3-35,(2023), pp.41-42 [last access: 13.09.2025]

[5]Հաշվարկները կատարվել են օգտվելով ՀՀ վիճակագրական կոմիտեի Հայաստանի վիճակագրական տարեգրքերից՝ 2002, 2006, 2007, 2013, 2017, 2022, 2023, 2024/ Կենսամակարդակ բաժին-«Բնակչության եկամուտների և ծախսերի կառուցվածքը ըստ դեցիլային խմբերի» տվյալների հիման վրա, հղում՝ https://armstat.am/ [մուտքի օր՝ 30.09.2025]

[6] ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ներկայացված բնակչության եկամուտների եվ ծախսերի կառուցվածքն ըստ դեցիլային խմբերի հաշվարկման մեջ 2023 թվականի համար ներկայացված դեցիլային խմբերի գումարը թերի է ներկայացված՝ 99,8%: Ամբողջական պատկերն արտացոլելու համար 0,1 % ավելացվել է միջին խմբին, և ևս 0,1 % հարուստ խմբին:

Ըստ աղյուսակ 1-ում ներկայացված խմբերի, բնակչության հարուստ խմբի մասնաբաժինը ըստ եկամտի 1996 թվականի 72.9%-ից նվազել է մինչև 57.9%՝ 2024 թվականին: Չնայած արձանագրված նվազմանը, հարուստ խումբը շարունակում է տնտեսությունում պահպանել եկամուտների գերակայությունը: Այս խումբը կազմում է ընդհանուր բնակչության 30%-ը, որի ձեռքում է կենտրոնացած եկամուտների մոտ 60%-ը:

Այսպիսով, 1996-2024 թվականների ընթացքում, ՀՀ-ում դրամական եկամուտների բաշխման պատկերը ցույց է տալիս, որ խմբերից յուրաքանչյուրում կառուցվածքը դարձել է ավելի հավասարաչափ, բայց դեռևս չի ընդգծվում միջին խավի ձևավորում և սոցիալական տեսանկյունից կայունություն: Չնայած արձանագրված մասնաբաժնի նվազման, հարուստ խումբը շարունակում է տնօրինել երկրում բնակչության եկամուտների կեսից ավելին՝ պահպանելով եկամուտների գերակայությունը: Իսկ միջին խավը ակնհայտ է, որ մնում է ամենամեծ խոցելիություն ունեցող խումբը (28.0%): Միջին խավի դրամական եկամուտների մասնաբաժնի ավելացումը նախապայման է հանդիսանում արժանավայել կենսամակարդակ, կայուն եկամուտներ, առողջապահություն և մատչելի կրթություն ունենալու, ինչպես նաև տնտեսական ակտիվության խթանման և դրա մասնակիցը դառնալու համար: Վերը նշված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքներից ելնելով, կյանքի որակի և կենսամակարդակի կառավարման համար անհրաժեշտ է գործիքակազմի մշակում որոշակի քաղաքականությամբ, որը կնպաստի հասարակությունում միջին խավի ձևավորմանը և եկամուտների բաշխման հավասարակշռմանը: Դրանք կարող են լինել.

1. *Նվազագույն աշխատավարձի բարձրացում:* Նվազագույն աշխատավարձը սոցիալ-տնտեսական քաղաքականության այն բաղադրիչներից է, որն ուղղակիորեն ազդում է եկամուտների բաշխման կառուցվածքի վրա: Այս տեսանկյունից նվազագույն աշխատավարձի բարձրացումը կարելի է դիտել որպես վերաբաշխող քաղաքականության այն լծակներից մեկը, որն ուղղված է ոչ թե սոցիալական փոխհատուցման, այլ միջին խավի կայուն վերարտադրության ապահովմանը, աղքատության կրճատմանը:
2. *Հարկման համակարգի արդար կառուցվածք:* Համահարթ եկամտային հարկումը, ի տարբերություն պրոգրեսիվ մոդելների, ըստ էության չեզոք է եկամուտների բաշխման նկատմամբ. այն չի ուղղում անհավասարությունը խմբերի միջև, այլ ֆիքսում է առկա վիճակը: Ֆիսկալ արդարության տեսանկյունից սա խնդրահարույց է, քանի որ հարկային բեռը համամասնորեն ծանր է ցածր եկամուտ ունեցողների համար: Պրոգրեսիվ հարկման համակարգի ներդրման մոդելը հնարավորություն կտա ունենալ հստակ սահմանված կառուցակարգ, ըստ որի եկամուտների ավելի մեծ մասնաբաժին ունեցող անձանց համար կգործի ավելի մեծ հարկային պատավորություններ՝ ապահովելով եկամուտների արդար բաշխման հավասարակշռված կառուցվածք: Այդ հարկային սանդղակը պետք է հիմնված լինի բնակչության միջին խավի եկամուտների (ծախսերի) վրա: Այլ կերպ ասած,

բնակչության դրամական եկամտի նոր բաշխման հիմնական նպատակը պետք է հիմնված լինի աղքատ, միջին և հարուստ խմբերի (դասերի) եկամուտների (ծախսերի) միջև համամասնությունների պահպանման վրա: Ընդունենք, որ հարուստ և աղքատ դասերի եկամուտների հաշվարկված հարաբերակցությունը (ամենաբարձր եկամուտ ունեցող բնակչության 20%-ի (ամենաբարձր քվինտիլ) կողմից ստացված ընդհանուր եկամտի, և ամենացածր եկամուտ ունեցող բնակչության 20%-ի (ամենացածր քվինտիլ) կողմից ստացված ընդհանուր եկամտի հարաբերակցությունը)[7] մոտ 7 անգամ է (42% / 6%[8]): Նման սկզբունքի պահպանումը եկամտային հարկի գանձման տեսանկյունից կապահովի հարուստների իրենց եկամուտներից 6-7 անգամ ավելի շատ հարկերի վճարումը պետական բյուջե՝ արտացոլելով այն տրամաբանությունը, որ հարկ վճարողի փաստացի վճարունակությունն է պայմանավորում հարկային բեռի չափը:

Ատենախոսության երկրորդ՝ «Բնակչության կյանքի որակի վերլուծությունը և գնահատումը սոցիալ-տնտեսական գործոնների և ցուցանիշների հիման վրա» գլխում ուսումնասիրվել են գնաճի ծրագրով նախատեսված և փաստացի մակարդակների զգալի շեղումները՝ առաջարկելով ներդնել պատասխանատվության համակարգ: Ռեգրեսիոն վերլուծության միջոցով կառուցվել է մոդել՝ կանխատեսելու ՀՀ ՀՆԱ-ի աճի տեմպը(սպառմանն ուղղված միջոցների ավելացմամբ)՝ ռուս-ուկրաինական պատերազմի ՀՀ տնտեսության վրա 2022 թ-ից հետո ունեցած դրական շոկերի բացակայության պայմաններում: Խոսքն այստեղ գնում է ՀՆԱ-ի կառուցվածքային այն բաղադրիչին, որը կոչվում է սպառում. այսինքն այստեղ մոդելը դիտարկվել է սպառմանն ուղղված միջոցների ավելացման տեսանկյունից:

Բացահայտվել են կյանքի որակի վրա սոցիալ-տնտեսական փոփոխությունները պայմանավորող գործոնները բազմաչափ (կլաստերային) վերլուծության միջոցով, տարբեր քաղաքներում բնակիչների կենսամակարդակին համապատասխան քաղաքականություն մշակելու համար՝ գնահատելով և վեր հանելով կառավարման ենթակա առկա հիմնախնդիրները:

ՀՀ-ում վերջին տասնամյակը բնորոշվում է անկայուն իրավիճակներով, որտեղ մակրոտնտեսական զարգացումները ևս այդ թվում են: Դիտարկելով գնաճի մակարդակը, այն ևս երկարաժամկետ ժամանակահատվածում դրսևորել է ոչ կայուն վարքագիծ՝ չպահպանվելով կանխատեսելիության սահմաններում: Այս իրավիճակը փաստում է դրամավարկային քաղաքականության գործիքների կյանքի որակի բարելավման, և դրանով հանդերձ այն տնտեսական կայունության մղելու ոչ բավարար լինելու հանգամանքը: Այս պայմաններում, կյանքի որակի բարելավման տեսանկյունից, անհրաժեշտ ենք համարում մշակել **կառավարման նոր մոդել**, որը **համակողմանի** դեր կունենա գնաճի վերահսկման և դրամավարկային քաղաքականության ապահովման

[7]Եվրոստատ տվյալների բազա, Եկամուտների քվինտիլային հարաբերակցություն, հղում՝ https://ec.europa.eu/eurostat/databrowser/view/TESSI180/bookmark/table?lang=en&bookmarkId=ef99a5b1-b587-46b7-8d09-4885fc18e8fe&c=1677515913059 [մուտքի օր՝ 24.01.2026]

[8]Հայաստանի վիճակագրական տարեգիրք – Statistical Yearbook of Armenia 2025. Կենսամակարդակ /Living Condition. Yerevan: Armstat, 2025, 122-157 էջեր, էջ 147 հղում՝ https://armstat.am/file/doc/99563928.pdf [մուտքի օր՝ 20.09.2025]

համար: Այս տեսանկյունից առաջարկվում է ներդնել **«Գնաճային պատասխանատվության կառավարման մոդել»**, որը հիմնված է ՀՀ կենտրոնական բանկի, կառավարության, մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների համագործակցության վրա՝ ուղղված գնաճի զգալի շեղումների արդյունքում սոցիալական պատասխանատվության կյանքի կոչմանը[9]:

Բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ երկարաժամկետում գների կայունությունն ու կանխատեսելի մակրոտնտեսական միջավայրը կայուն տնտեսական աճի և բնակչության կենսամակարդակի բարելավման ամենակարևոր նախապայմաններից են[10]:

Աղյուսակ 2

ՀՀ-ում գնաճի փաստացի[11] և ծրագրով նախատեսված[12] մակարդակները 2015-2024թթ-երի ընթացքում (տարեկան%)

Տարի	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Գնաճ ծրագրով նախատեսված (տարեկան, %)	4.0 +/- 1.5	4.0 +/- 1.5	4.0 +/- 1.5	4.0 +/- 1.5	4.0 +/- 1.5	4.0 +/- 1.5	4.0 +/- 1.5	4.0 +/- 1.5	4.0 +/- 1.5	4.0 +/- 1.5
Գնաճ փաստացի (տարեկան, %)	3,7	-1,4	1,0	2,5	1,4	1,2	7,2	8,6	2,0	0,3

Չնայած «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով գնաճի նախատեսված մակարդակին, ըստ աղյուսակ 2-ում ներկայացված տվյալների, արձանագրվել են զգալի շեղումներ գնաճի՝ օրենքով նախատեսված և փաստացի մակարդակների միջև (2021թ.,2022թ.): Թերևս, հարկ է նշել, որ մինչ օրս չկան որևէ կառուցակարգեր, որոնք պատասխանատվություն կառաջացնեն այս շեղումների համար: Արդյունքում, շեղման բացասական հետևանքների հիմնական կրողը **հասարակությունն է,** հատկապես բնակչության այն խավերը, որոնք ունեն ավելի ցածր եկամուտներ:

Հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությամբ ամրագրված գնաճի թիրախային ցուցանիշը՝ 4.0%, դիտարկենք փաստացի ցուցանիշի և այս նախատեսված թիրախային մակարդակի տարբերությունը, որ բնութագրում է առաջացած շեղումը: Գնաճի փաստացի և ծրագրով նախատեսված մակարդակների շեղման չափը բազմապատկում

---

[9] Առաջարկը ներկայացվում է հեղինակի կողմից: Միջազգային պարկտիկայում նմանատիպ նախադեպ գրանցվել է Կանադայում:

[10] Ավետիսյան, Հ., Իգիթյան, Հ., և Պապիկյան, Ա., Գնաճի նպատակային ցուցանիշը Հայաստանում. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Հոկտեմբեր 2024, 33 էջ, էջ 31, հղում՝ https://old.cba.am/AM/panalytical materialsresearches/inflation_target_in_Armenia_arm.pdf [մուտքի օր՝ 16.06.2025]

[11] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով Համաշխարհային Բանկի Գնաճ (տարեկան %) 2011-2024թթ.-ի տվյալները, հղումներ՝ https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?locations=AM https://fred.stlouisfed.org/series/FPCPITOTLZGARM [մուտքի օր՝ 24.08.2025]

[12] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության Պետական բյուջե հատվածում ներկայացված օրենքի 4-րդ հոդվածը, 2015-2024թթ. հղում՝ https://minfin.am/hy/page/petakan_byuj/# [մուտքի օր՝ 24.08.2025]

ենք տվյալ տարում ՀՆԱ-ի մեծությամբ, և ստանում ենք այն վնասի մեծությունը, որը կրել է հասարակությունը:

2021 թվականի համար՝ 7,2 – 4,0 = 3,2% շեղում

2022 թվականի համար՝ 8,6 – 4,0 = 4,6% շեղում

Վնասի մեծությունը առաջարկում ենք հաշվարկել հետևյալ բանաձևով՝

Վնասի մեծություն = Շեղման չափ * ՀՆԱ

2021 թվականին ՀՀ ՀՆԱ-ն կազմել է 6,991,777.8 մլն դրամ, իսկ 2022 թվականին՝ 8,501,449.4 մլն դրամ, ապա տեղադրելով վերոնշյալ բանաձևի մեջ հաշվարկման արդյունքում կստանանք՝.

Վնասի մեծություն$_{2021}$ **= 3,2 % * 6,991,777.8 միլիոն դրամ = 223,736.88 մլն դրամ**

Վնասի մեծություն$_{2022}$ **= 4,6 % * 8,501,449.4 միլիոն դրամ= 391,066.67 մլն դրամ**

Արդյունքում կստանանք, որ 2021 թվականին հասարակությունը կրել է **223.74 միլիարդ դրամի, իսկ** 2022 թվականին **391.07 միլիարդ դրամի** վնաս՝ գնաճի շեղումների պատճառով: Այսպիսով, օրենքի խախտման կամ օրենքի պահանջի չպահպանման հետևանքով անհրաժեշտ է **պատասխանատվության կառուցակարգերի ներդնումը,** որը կնպաստի շեղումների վերահսկմանը և կանխարգելմանը՝ հանդիսանալով հասարակական բարեկեցության և տնտեսական կայունության երկարաժամկետ գրավական:

Հետևաբար, քաղաքականությունների հիմքում դրվել է գնաճի վերահսկման մեխանիզմը, որպես դրամավարկային ուսումնասիրության կառուցվածքային խնդիր՝ հասարակության կյանքի որակի և բարկեցության վրա ունեցած ազդեցության հիմնավորման նպատակով: Նպատակին հասնելու, ինչպես նաև գնաճի փաստացի և ծրագրով նախատեսված մակարդակների շեղումների վերահսկումը գների կայունության ուղղելու համար անհրաժեշտ է նոր մեխանիզմների կիրառումը՝ սոցիալական կայունության ձևավորման և պահպանման համար:

Կյանքի որակի և կենսամակարդակի բարելավման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավիճակի ներկայացման և գնահատման համար, իրականացվել է ՀՀ քաղաքներում սպառման ապրանքների գների և ծառայությունների սակագների կլաստերային վերլուծություն՝ նպատակ ունենալով բացահայտել ՀՀ քաղաքներում գնային ընդհանրություններն ու տարբերությունները: Տվյալների խումբը ներառում է հանրապետության մի շարք քաղաքներում տարբեր պարենային և ոչ պարենային ապրանքախմբերի ու ծառայությունների սակագների ինդեքսները՝ 2023 թ-ին:



Գծապատկեր 2. Կլաստերացման արդյունքների աստիճանակարգային ներկայացում[13]

Իրականացնելով կլաստերային վերլուծություն (SPSS ծրագրային փաթեթի օգնությամբ) աստիճանակարգային մեթոդով (գծապատկեր 2), ստացվել է կլաստերացման հաջորդական փուլերը, որտեղ սկզբնական փուլերում խմբավորվում են միմյանց մոտ գտնվող օբյեկտները:

Այսպիսով, դիտարկելով, թե որ կլաստերում ինչ օբյեկտ է ընդգրկվել, և կլաստերի կենտրոնից օբյեկտի ունեցած հեռավորությունը, ստացվել են հետևյալ արդյունքները.

- **Ցածր գնային կլաստեր՝** 6 ապրանքախմբեր (հացամթերք, ձկնամթերք, միրգ, բանջարեղեն, շաքարավազ, դեղագործական ապրանքներ):
- **Միջին գնային կլաստեր՝** 5 ապրանքախմբեր (մսամթերք, կաթնամթերք, հագուստ, կոշիկներ, բնակարանի նորոգման և սպասարկման ծառայություններ):
- **Բարձր գնային կլաստեր՝** 2 ապրանքախմբեր (տրանսպորտի ծառայություններ, հանգստի կազմակերպման ծառայություններ):

Դիտարկվել է նաև կլաստերացումն ըստ քաղաքների՝ բացահայտելու դրանց միջև առկա գնային ընդհանրությունները (աղյուսակ 3)

[13] Գծապատկերը կազմվել է SPSS ծրագրային փաթեթի կլաստերային վերլուծության գործիքի միջոցով՝ հիմք ընդունելով ՀՀ առանձին քաղաքներում սպառման ապրանքների և ծառայությունների սակագների ինդեքսների հավաքագրված տվյալները:

Աղյուսակ 3

Կլաստերային վերլուծության արդյունքներն ըստ քաղաքների[14]

Քաղաք	Կլաստերի համար	Կլաստերի կենտրոնից հեռավորություն
Երևան	1	10,78
Գյումրի	2	10,05
Վանաձոր	3	0,00
Վաղարշապատ	1	8,63
Աշտարակ	1	7,96
Իջևան	2	7,60
Հրազդան	2	5,91
Եղեգնաձոր	1	8,73
Գավառ	1	6.41
Կապան	2	9,27
Արտաշատ	1	7,37

Այսպիսով, գնային ինդեքսների առումով ընդհանրություններ ունեն Երևան, Վաղարշապատ, Աշտարակ, Եղեգնաձոր, Գավառ, մյուս կողմից՝ Գյումրի, Իջևան, Հրազդան, Կապան քաղաքները: ՀՀ քաղաքներում դիտարկվող ժամանակահատվածում ամենաբարձր գնային աճ արձանագրվել է տրանսպորտի ծառայության, և հանգստի կազմակերպման ծառայության պարագայում, ի տարբերություն մյուս ապրանքների ու ծառայությունների խմբերի համեմատ: Այս վերլուծության նախատիպը կարող է օգտագործվել կենսամակարդակի բարելավման նկատառումներով տարբեր քաղաքներում համապատասխան քաղաքականություն մշակելիս՝որպես կառուցակարգ դիտարկելով ցածր գնային կլաստերում ընդգրկված քաղաքներում աղքատության մակարդակի նվազեցման համար աշխատատեղերի ստեղծումը և տնտեսական ակտիվության բարձրացումը:

Երրորդ՝ «Բնակչության կյանքի որակի գնահատման և կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» գլխում առաջարկվել է կյանքի որակի գնահատման համաթիվ, հիմնված 3 ոլորտներից ընտրված 24 ցուցանիշների վրա՝ միավորելով միջազգային մասշտաբով և ՀՀ-ում առավել հաճախ օգտագործվող տարբեր մեթոդաբանական մոտեցումները: Համաթիվը կարող է օգտագործվել ինչպես ՀՀ, այնպես էլ ուսումնասիրված 100 երկրների բնակչության կյանքի որակի գնահատման համար: Բնակչության կյանքի որակը առավել ճշգրիտ բնութագրելու համար կազմվել է կյանքի որակի գնահատման նոր մեթոդ՝ որպես քաղաքականության ձևավորման հիմք: Այն իրենից ներկայացնում է կյանքի որակը բնութագրող այնպիսի հիմնարար ցուցանիշների ամբողջություն, որոնք բնորոշ են երկրներում տնտեսական, սոցիալական, մշակութային և ժողովրդագրական բնութագրերին կամ առանձնահատկություններին: Կյանքի որակի գնահատման համար ընտրվել է 3 ոլորտներից 24 ցուցանիշներ: Հայաստանում բնակչության կյանքի որակի գնահատումը

[14] Աղյուսակը կազմվել է SPSS վերլուծական ծրագրային փաթեթի միջոցով ստացված կլաստերային վերլուծության արդյունքներից:

իրականացվել է 10 տարիների կտրվածքով՝ նպատակ ունենալով նաև բացահայտել տարիների ընթացքում կյանքի որակի դինամիկան:

Կյանքի որակի՝ հեղինակի առաջարկած մեթոդաբանությունը ենթադրում է նշված ցուցանիշների հիման վրա կյանքի որակի համաթվի կառուցում: Աղյուսակ 4-ում ներկայացված է հեղինակի կողմից ընտրված 3 ոլորտներից ցուցանիշները՝

Աղյուսակ 4

Երեք ոլորտներից վերցված համապատասխան ցուցանիշներ[15]

Տնտեսական ցուցանիշներ		Սոցիալական ցուցանիշներ		Ժողովրդագրական ցուցանիշներ	
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ, (ԱՄՆ դոլար)	ՀՆԱ	Գործազրկության մակարդակ, (%)	ԳՇ	Բնակչության թվաքանակ, (1000 մարդ)	ԲԹ
Մշակող արդյունաբերության տեսակարար կշիռն արդյունաբերության կառուցվածքում,(%)	ՄԱ	Կրթության պետական ծախսեր, (% ՀՆԱ)	ԿՊԾ	Մանկական մահացության մակարդակ, (1000 մարդու հաշվով)	ՄՄ
Արդյունաբերական մրցակցային արդյունավետության համաթիվ, (միավոր)	ԱՄԱՀ	Տնային տնտեսությունների սպառողական ծախսերը մեկ շնչի հաշվով, (ԱՄՆ դոլար)	ՏՏԾ	Կյանքի տևողություն ծննդյան պահին, (տարի)	ԿՏ
Մեկ զբաղված անձի հաշվով ՀՆԱ-ի տարեկան աճ, (%)	ԶԲ$_{հնա}$	Տնային տնտեսությունների սպառողական ծախսեր, (% ՀՆԱ)	ՏՏԾ$_{հնա}$	Դպրոցական կրթություն, տարրական, (%)	ԴԿ
Հիմնական կապիտալի մասնաբաժինը համախառն թողարկման կառուցվածքում, (%)	ՀԿՄ	Բնական ռեսուրսներից ստացված ընդհանուր վարձավճարներ, (% ՀՆԱ)	ԲՌՎ	Համախառն ընդգրկվածության մակարդակ ըստ կրթության մակարդակի, (%)	ԸՄ$_{կրթ}$
Ծառայությունների մասնաբաժինը համախառն թողարկման կառուցվածքում, (% ՀՆԱ)	ԾԱ	Թերսնման տարածվածություն, (բնակչության %)	ԹՏ	Զուտ միգրացիայի մակարդակ, (1000 մարդու հաշվով)	ԶՄՄ
Սպառողական գների ինդեքս, (ինդեքսային միավոր)	ՍԳԻ	Աղքատ բնակչության մասնաբաժին, 3.65 ԱՄՆ դոլար օրական (%)	ԱԲՄ		
Ապրանքների և ծառայությունների արտահանում, (ԱՄՆ դոլար)	ԱԾԱ	Ջինիի գործակից, (միավոր)	ՋԳ		
Բարձր տեխնոլոգիական արտահանում, (% արտադրված արտադրանքի արտահանման մեջ)	ԲՏԱ				
Գլոբալ նորարարական համաթիվ, (միավոր)	ԳՆՀ				

[15] Կյանքի որակի համաթվի կառուցման համար անհրաժեշտ ցուցանիշների քանակական գնահատականները, վերցվել են Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի, ՏՀԶԿ հաշվետվություններից, և ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից տրամադրվող տվյալների բազաներից:

Համաթիվը կառուցելիս կիրառվել է գործոնային վերլուծություն՝ տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ոլորտներում յուրաքանչյուր ցուցանիշի կշիռները ստանալու համար[16]: Երեք ենթահամաթվեր՝ տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական, ներկայացվել են որպես նորմավորված ցուցանիշներից բաղկացած կշռված արժեքներ: Ցուցանիշների նորմավորումից հետո կյանքի որակի համաթիվը (ԿՈՀ) ներկայացրել ենք հետևյալ կերպ.

$$\text{ԿՈՀ} = \mathbf{0.381} * \text{ՏՈՀ} + \mathbf{0.213} * \text{ՍՈՀ} + \mathbf{0.405} * \text{ԺՈՀ}$$

որտեղ՝

ՏՈՀ- տնտեսական ոլորտի համաթիվ,

ՍՈՀ- սոցիալական ոլորտի համաթիվ,

ԺՈՀ- ժողովրդագրական ոլորտի համաթիվ:

Իսկ կյանքի որակի համաթվում ներառված ենթահամաթվերը հաշվարկվել է հետևյալ կերպ[17].

1. $$\text{ՏՈՀ} = \mathbf{0.114} * \text{ՀՆԱ} + \mathbf{0.115} * \text{ՄԱ} + \mathbf{0.153} * \text{ԱՄԱՀ} + \mathbf{0.033} * \text{ՁԲ}_{\text{ՀՆԱ}} + \mathbf{0.082} * \text{ՀԿՄ} + \mathbf{0.135} * \text{ԾԱ} + \mathbf{0.052} * \text{ՍԳԻ} + \mathbf{0.110} * \text{ԱԾԱ} + \mathbf{0.056} * \text{ԲՏԱ} + \mathbf{0.150} * \text{ԳՆՀ}$$

2. $$\text{ՍՈՀ} = \mathbf{0.1454} * \text{ԳԾ} + \mathbf{0.0916} * \text{ԿՊԾ} + \mathbf{0.1290} * \text{ՏՏԾ} + \mathbf{0.1417} * \text{ՏՏԾ}_{\text{ՀՆԱ}} + \mathbf{0.1010} * \text{ԲՌՎ} + \mathbf{0.1647} * \text{ԹՏ} + \mathbf{0.1585} * \text{ԱԲՄ} + \mathbf{0.0684} * \text{ՁԳ}$$

3. $$\text{ԺՈՀ} = \mathbf{0.059} * \text{ԲԹ} + \mathbf{0.207} * \text{ՄՄ} + \mathbf{0.209} * \text{ԿՏ} + \mathbf{0.163} * \text{ԴԿ} + \mathbf{0.224} * \text{ԸՄ}_{\text{կրթ}} + \mathbf{0.138} * \text{ՁՄՄ}$$

Այսպիսով, աղյուսակ 5-ում ներկայացված Հայաստանի բնակչության կյանքի որակի գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում բնակչության կյանքի որակը 10 տարիների ընթացքում ի համեմատ սկզբնական շրջանի ավելացել է մոտ 1.5 անգամ:

---

[16] Գործոնային վերլուծությունը (գլխավոր բաղադրիչների մեթոդ՝ վարիմաքսային պտույտով) կիրառվել է յուրաքանչյուր ցուցանիշի համար օբյեկտիվ վիճակագրական կշիռներ ստանալու համար՝ համապատասխան տիրույթում:

[17] Համաթվերում նշված բոլոր կշիռները տրվել են փորձագիտական հարցումների արդյունքում (50 փորձագետներ):

Աղյուսակ 5

Հայաստանի բնակչության կյանքի որակի համաթիվը 2015-2024 թթ-ի ընթացքում[18]

Տարի/Համաթիվ	ՏՈՀ	ՍՈՀ	ԺՈՀ	ԿՈՀ
2015	0,210	0,438	0,410	0,339
2016	0,322	0,453	0,369	0,369
2017	0,396	0,549	0,382	0,423
2018	0,407	0,369	0,355	0,377
2019	0,534	0,370	0,313	0,409
2020	0,468	0,374	0,172	0,328
2021	0,465	0,469	0,187	0,353
2022	0,634	0,381	0,477	0,516
2023	0,622	0,328	0,667	0,577
2024	0,545	0,474	0,571	0,540

Վերոնշյալ առաջարկվող մեթոդաբանությունը կարող է օգտագործվել որոշելու տվյալ երկրում բնակչության կյանքի որակի համաթիվը: Այդ նպատակով հավաքագրվել է նաև 100 երկրների տնտեսական, ժողովրդագրական և սոցիալական ցուցանիշները 10 տարվա կտրվածքով: Այնուհետև, յուրաքանչյուր ցուցանիշի նորմավորված արժեքներով, և փորձագիտական գնահատման հիման վրա տրված կշիռներին համապատասխան կազմում ենք ենթահամաթվեր: Այդ ենթահամաթվերի միջոցով, որոնք բաղկացած են երեք ոլորտներից, մենք կարող ենք կազմել 100 երկրների բազմաչափ կյանքի որակի համաթիվ 10 տարվա ընթացքում:

Իրականացվել է զույգային ռեգրեսիոն վերլուծություն կյանքի որակի և տնտեսական զարգացումը պայմանավորող գործոնների միջև, առանձին-առանձին նպատակ ունենալով բացահայտել կյանքի որակի և նշված գործոնների միջև առկա կապը: ՀՀ-ում կյանքի որակի կառավարման և բարելավման հիմքում անհրաժեշտ է ձևավորել բազմաչափ վերլուծությունների ամբողջականությամբ կառուցվածքային բարեփոխումներ՝ գործարկված տարաբնույթ մեխանիզմներով: Աշխատանքի վերջին ենթագլխում համակարգային բարեփոխումների անցման պարագայում ներակայացվել են կյանքի որակը պայմանավորող յուրաքանչյուր ոլորտում առկա հիմնախնդիրները և առաջարկվել դրանց համապատասխան կառավարման կառուցակարգեր:

Ատենախոսությունում կատարված վերլուծությունները հանգեցրել են հետևյալ հիմնական **եզրակացություններին**:

1. Կյանքի որակը բնութագրում է անհատի և հասարակության բարեկեցությունը հանդիսանալով բազմաչափ ինտեգրալ ցուցանիշ, որը համադրում է առանցքային ոլորտներից (սոցիալական, տնտեսական, կրթական, և այլ) վերցված ցուցանիշները օբյեկտիվ պայմանների և անհատի սուբյեկտիվ բավարարվածության բարելավման նպատակով: Իսկ այս եզրույթի կառավարումը ներկայացվել է որպես համակարգային գործընթաց, որի իրավասու հանդիացող մարմինները, կազմակերպում և վերահսկում են հասարակության կյանքի որակին առնչվող ոլորտները:
2. 2015-2024 թվականներին բնակչության թվաքանակի և կազմի դինամիկան դիտարկելով կարող ենք ասել, որ այս մասով նկատվել է ուրբանիզացման միտում:

[18] Աղյուսակը կազմվել է հիմք ընդունելով ենթահամաթվերի և ԿՈՀ-ի հաշվարկման բանաձևերը:

Սրա արդյունքում ՀՀ-ում գյուղական բնակավայրերը բախվում են ժողովրդագրական խնդիրների և արտագաղթի հետևանքներին, իսկ քաղաքները շարունակում են պահպանել սոցիալ-տնտեսական գրավչությունը:

3. 2015-2024 թվականներին միջին ամսական անվանական աշխատավարձերի մասով արձանագրվել են դրական փոփոխություններ: Այսպես, 2015 թվականին աշխատողների միջին անվանական աշխատավարձը կազմել է 171.615 դրամ, իսկ 2024 թվականին՝ 287.172 դրամ: Տասնամյակի ընթացքում արձանագրված աճը կազմել է 67 տոկոս, որը խոսում է տնտեսության ներսում աշխատավարձերի մասով դրական տեղաշարժերի մասին: Սակայն բարելավմանն ուղղված շրջափուլը նկատվել է վերջին երեք տարիներին՝ 2022 թվականից սկսած: Համեմատության մեջ դնելով նվազագույն սպառողական զամբյուղի հետ, նշենք, որ անվանական աշխատավարձերի աճը գերազանցել է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի աճին, որի արդյունքում միջին աշխատողի եկամուտը սկսել է գերազանցել կենսապահովման նվազագույն շեմը: Այստեղ կարող ենք եզրակացնել, որ աշխատավարձերի դինամիկան հանդիսանում է ոչ միայն տնտեսական աճի ցուցիչ, այլև սոցիալական կայունության անհրաժեշտ գործոն:
4. 2015-2024 թվականներին նվազագույն աշխատավարձը Հայաստանում աճել է 36.4 %-ով, որը համեմատության մեջ բավական հետ է մնում սպառողական գների ինդեքսի նույն ժամանակահատվածի փոփոխությունից: Արդյունքում կարող ենք ասել, որ նվազագույն աշխատավարձը չի ապահովում աշխատուժի վերարտադրության նվազագույն կենսամակարդակը, և որ իրական արժեքը գնաճի պայմաններում նվազել է: Այսպիսով, ստացվում է, որ նվազագույն աշխատավարձը Հայաստանում այժմ ընկալվում է որպես սոցիալական նվազագույն ապահովության չափանիշ, սակայն կյանքի իրական որակի և արժեքի ներկայացման նախապայմանը՝ այն է տնտեսական կարգավորիչի գործառույթը, դեռևս չի իրականացվում:
5. 1996-2024 թվականներին դրամական եկամուտների բաշխման տեսանկյունից ամենանկատելի փոփոխությունը տեղի է ունեցել հատկապես աղքատ խմբում: Այս խմբում դիտարկվող քսանութ տարիների ընթացքում եկամտի բաժինը աճել է մոտ 3 անգամ՝ 4.4%-ից հասնելով մինչև 14.2%: Նույնը դիտարկելով նաև միջին խմբի համար, կարող ենք ասել, որ այստեղ գրանցված փոփոխությունները անկայուն և ոչ դինամիկ բնույթի են: Իսկ հարուստ խմբում եկամտի մասնաբաժինը դիտարկվող ժամանակահատվածում նվազել է 72.9%-ից մինչև 57.9%: Այս խումբը կազմում է ընդհանուր բնակչության 30%-ը, որի ձեռքում է կենտրոնացած եկամուտների մոտ 60%-ը: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ 1996-2024 թվականների ընթացքում, ստացված խմբերում դրամական եկամտների բաշխման կառուցվածքը դարձել է ավելի հավասարաչափ, բայց այն չի ծառայում միջին խավի ձևավորմանը, ինչպես նաև չի ապահովում սոցիալական կայունության նախապայմանը: Այսինքն, չնայած արձանագրված մասնաբաժնի նվազման, հարուստ խումբը շարունակում է տնօրինել երկրում բնակչության եկամուտների կեսից ավելին՝ պահպանելով եկամուտների գերակայությունը: Իսկ միջին խավը ակնհայտ է, որ մնում է

ամենամեծ խոցելիություն ունեցող խումբը: Եզրակացնելով, պարզ է դառնում, որ երկու հիմնախնդիրների (այն է՝ հարուստ խավի սպառման մասով ունեցած գերակայությունը, և միջին խավի թերի կառուցվածքը և ձևավորման հիմքերը) արդյունքները մնում են մտահոգիչ և տնտեսության սոցիալ-տնտեսական հավասարակշռման տեսանկյունից ոչ բավարար: Միջին խավի ձևավորման և եկամուտների բաշխման կառուցվածքային անհավասարությունների մեղմման համար անհրաժեշտ **կառավարման կառուցակարգը** հետևյալն է. ավելի մեծ նշանակություն տալ բնակչության միջին խավի մասնաբաժնի ավելացմանը՝ ոչ միայն աղքատության նվազեցման, այլև հարուստ խավի եկամուտների բաշխման միջոցով, ուղղելով դեպի միջին խավ՝ օգտագործելով հիմնական տնտեսական լծակներն ու գործիքները:

6. Ռեգրեսիոն վերլուծության արդյունքներից հետևում է, որ այլ հավասար պայմաններում, ՌԴ ՀՆԱ-ի 1% աճը կհանգեցնի ՀՀ ՀՆԱ-ի 0.02% աճի: Այսինքն, ըստ մոդելի՝ 2026 թվականին կունենանք մոտավորապես ՀՆԱ-ի 0,07%-ի անկում, եթե ռուս-ուկրաինական պատերազմի դրական շոկը դուրս գա: Դրա համար անհրաժեշտ է, որ կառավարությունը ևս հստակ գործողությունների պլանավորմամբ այլ ռեզերվներ ստեղծի՝ ռուս-ուկրաինական պատերազմի դրական շոկերից հետո աճի ապահովման համար:
7. Դիտարկելով 10 տարվա ընթացքում գնաճի ծրագրով նախատեսված և փաստացի մակարդակները, պարզվեց, որ 2021 թվականին հասարակությունը կրել է 223.74 միլիարդ դրամի, իսկ 391.07 միլիարդ դրամի վնաս՝ գնաճի շեղումների պատճառով: Այս պարագայում առաջարկում ենք ներդնել «Գնաճային պատասխանատվության **կառավարման մոդել**»:
8. Ըստ կլաստերային վերլուծության, գնային ինդեքսների առումով ընդհանրություններ ունեն Երևան, Վաղարշապատ, Աշտարակ, Եղեգնաձոր, Գավառ, մյուս կողմից՝ Գյումրի, Իջևան, Հրազդան, Կապան քաղաքները: ՀՀ քաղաքներում դիտարկվող ժամանակահատվածում ամենաբարձր գնային աճ արձանագրվել է տրանսպորտի ծառայության, և հանգստի կազմակերպման ծառայության պարագայում, իսկ միջին գնային աճ հիմնականում արձանագրվել է առաջին անհրաժեշտության ապրանքների մասով, որը նկատելի է մյուս ապրանքների ու ծառայությունների խմբերի համեմատ: Որպես **կառավարման կառուցակարգ** դիտարկվել է տարբերակված մոտեցում տարածքային զարգացման քաղաքականության մեջ՝ ուղղված ցածր գնային կլաստերում ընդգրկված քաղաքներում աշխատատեղերի ստեղծման և տնտեսական ակտիվության բարձրացման անհրաժեշտությանը:
9. Կյանքի որակի գնահատման առաջարկված համաթիվը, որպես **քաղաքականության ձևավորման հիմք**, ցույց տվեց, որ Հայաստանում բնակչության կյանքի որակը 10 տարիների ընթացքում ի համեմատ սկզբնական շրջանի ավելացել է մոտ 1.5 անգամ: 2015-2024 թվականների ընթացքում համաթիվը աչքի է ընկել է և՛ անկայուն վարքագծով, և՛ բարելավմամբ:
10. Կյանքի որակի և տնտեսական զարգացումը պայմանավորող հիմնական ոլորտների

միջև իրականացված զույգային ռեգրեսիոն վերլուծությունից պարզ է դառնում, որ դիտարկվող ժամանակահատվածում կյանքի որակի վրա համեմատաբար մեծ ազդեցություն են ունեցել առևտրի, տեղեկատվության և կապի, շինարարության, առողջապահության և մշակող արդյունաբերության ոլորտները: Եզրակացնելով կարող ենք նշել, որ բնակչության կյանքի որակի բարելավումը հիմնվել է տնտեսության ծառայողական, ինչպես նաև ենթակառուցվածքային բնույթ ունեցող ոլորտների վրա:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. **Գ. Սալնազարյան, Մ. Հարությունյան,** «Կյանքի որակի գնահատման առանձնահատկությունները ՀՀ-ում», «ՇՊՀ Գիտական տեղեկագիր», N2, ՊՐԱԿ Ա, 2019, էջեր 306-315 : https://shsu.am/media/journal/2019n2a/31.pdf
2. **Մ. Հարությունյան,** «Համավարակի ազդեցությունը բնակչության կյանքի որակի վրա», «ՇՊՀ Գիտական տեղեկագիր», N1, ՊՐԱԿ Ա, 2021, էջեր 120-127 : DOI 10.54151/27382559-2022.2a-120 https://shsu.am/media/journal/2022n1a/15.pdf
3. **Մ. Հարությունյան,** «Ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցությունը բնակչության կյանքի որակի վրա ՀՀ-ում», «ՇՊՀ Գիտական տեղեկագիր», N1, ՊՐԱԿ Ա, 2024, էջեր 94-105 : DOI https://doi.org/10.54151/27382559-24.1pa-94 https://shsu.am/wp-content/uploads/2024/09/9.pdf
4. **Մ. Հարությունյան,** «Հայաստանում սոցիալ-տնտեսական փոփոխությունները և դրանց ազդեցությունը կյանքի որակի վրա՝ սպառման ապրանքների և ծառայությունների վերլուծությամբ», «ՇՊՀ Գիտական տեղեկագիր», N1, ՊՐԱԿ Ա, 2025, էջեր 177-191 : DOI https://doi.org/10.54151/27382559-25.1pa-177 https://shsu.am/wp-content/uploads/2025/08/1-14.pdf
5. **Մ. Հարությունյան,** «Կայուն զարգացումը որպես կյանքի որակի չափանիշ. Կրթության, առողջապահության և համախառն ազգային եկամտի ազդեցությունը», «ՇՊՀ Գիտական տեղեկագիր», N1, ՊՐԱԿ Ա, 2025, էջեր 192-202: DOI https://doi.org/10.54151/27382559-25.1pa-192 https://shsu.am/wp-content/uploads/2025/08/1-15.pdf
6. **Մ. Հարությունյան,** «Միջին խավի դերը սոցիալական անհավասարության նվազեցման եւ կյանքի որակի բարելավման գործում», «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, հատոր ԺԶ, № 6 (61), 2025, էջեր 200-204: DOI:10.58587/18292437-2025.6-200 https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2025_6_200_204.pdf
7. **M. Harutyunyan,** Socio-economic determinants and quality of life assessment in Armenia: Designing a flexible assessment tool, «Region and the World» Scientific-Analytical Journal, volume XVII №2 (63),2026 pp. 174-180 : DOI: 10.58587/18292437-2026.2-174 https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2026_2_174_180n.pdf

МАРИАМ МАСИСОВНА АРУТЮНЯН

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ КАЧЕСТВОМ ЖИЗНИ НАСЕЛЕНИЯ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - "Экономика и управление народным хозяйством и его отраслями"

Защита диссертации состоится 20-го июля 2026г. в 14:00 на заседании специализированного совета 014, действующего при Армянском государственном экономическом университете, по адресу: г. Ереван,Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Актуальность темы диссертации: Качество жизни характеризует все аспекты человеческой жизни и является главной предпосылкой экономического и социального развития, мерилом человеческого развития, результатом совместного развития различных сфер общественной жизни, имеющим фундаментальное значение для восприятия человеческого существования. В то же время экономический рост последних лет не обеспечил адекватного улучшения качества жизни в РА. Несоответствие между минимальной заработной платой и потребительской корзиной указывает на неэффективность системы перераспределения доходов. Хотя доля богатого класса уменьшилась, он по-прежнему контролирует подавляющую часть доходов страны. Формирование среднего класса, как основного фактора социально-экономической стабильности, остается серьезной структурной проблемой для Республики Армения. Это несоответствие выявляет проблему разрыва между экономической политикой и социальной эффективностью, что создает необходимость в новых подходах к управлению.

Цель и задачи исследования. Главная цель исследования – анализ подходов, используемых для решения существующих проблем в процессе управления качеством жизни населения Республики Армения, и выявление путей их улучшения. Для достижения поставленной цели были определены следующие **задачи**:

- Изучение теоретических принципов и методологических основ качества жизни;
- анализ социально-экономических показателей, характеризующих качество жизни населения Республики Армения, и их динамики, выявление возможных путей их регулирования;
- изучение и сравнительный анализ международных стандартов и различных подходов к оценке качества жизни;
- выявление структурных особенностей распределения доходов и социальной стратификации населения Республики Армения, представление механизмов регулирования;
- выявление факторов, определяющих социально-экономические изменения качества жизни, посредством многомерного анализа, с выделением существующих проблем, подлежащих решению;

- разработка новой модели оценки качества жизни путем построения индекса;
- оценка влияния факторов, определяющих социально-экономическое развитие Армении, на качество жизни населения;
- разработка и предложение лицам, принимающим решения, основных путей повышения качества жизни населения Республики Армения и механизмов государственного регулирования.

Объект и предмет исследования. Объектом исследования является процесс формирования и управления качеством жизни населения РА, а предметом – механизмы взаимодействия социально-экономических факторов, влияющих на качество жизни населения РА.

Научная новизна диссертации. Результаты исследования имеют методологическое, всеобъемлющее и прикладное значение, научная новизна которых отражена в следующих основных положениях:

- Разработана модель совместного управления контролем уровня инфляции и ответственностью, основанная на значительных отклонениях, зафиксированных в результате сравнения инфляции с фактическим уровнем, предусмотренным статьей 4 Закона Республики Армения «О государственном бюджете Республики Армения», в случае которого установлена ответственность для лиц, способствовавших возникновению данной проблемы;
- построена модель с использованием регрессионного анализа для прогнозирования темпов роста ВВП РА в отсутствие позитивных шоков в экономике РА после 2022 года в связи с российско-украинской войной;
- путем выявления общих черт и различий между городами, сгруппированными посредством кластерного анализа, обусловленных различиями в потреблении товаров и услуг и индексах цен, был рассмотрен дифференцированный подход к политике территориального развития как механизм управления, направленный на создание рабочих мест и повышение экономической активности в городах, входящих в кластер с низкими ценами;
- был разработан индекс оценки качества жизни, основанный на 24 показателях, представляющих 3 сектора, сочетающий различные методологические подходы, наиболее часто используемые на международном уровне и в Республике Армения. Индекс может быть использован для оценки качества жизни населения как Республики Армения, так и 100 стран, участвовавших в исследовании (в случае изменения весовых коэффициентов).

MARIAM MASIS HARUTYUNYAN

THE MAIN ISSUES OF MANAGING THE QUALITY OF LIFE OF THE POPULATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA)

The abstract of the dissertation is submitted for pursuing the degree of Ph.D. in Economics in the field 08.00.02 - "Economy, the economics of its spheres and control"

The defense of the dissertation will take place on July 20, 2026, at 14:00 at the meeting of the specialized council 014, operating at the Armenia State University of Economics, at the address: Yerevan, Nalbandyan 128.

ABSTRACT

Actuality of the research. Quality of life characterizes all aspects of human life and existence and is the primary prerequisite for economic and social development, a measure of human development, and the result of the combined development of various spheres of public life, fundamental to the perception of human existence.

At the same time, the economic growth of recent years has not ensured an adequate improvement in the quality of life in the Republic of Armenia.The discrepancy between the minimum wage and the consumer basket indicates the ineffectiveness of the income redistribution system. Although the share of the wealthy class has decreased, it still controls the overwhelming majority of the country's income. The weak formation of the middle class, as the main factor in socioeconomic stability, remains a serious structural problem for the Republic of Armenia. This discrepancy reveals the problematic gap between economic policy and social effectiveness, creating the need for new approaches to governance.

The purpose and objectives of the study. The primary purpose of the study is to analyze approaches used to address existing issues in managing the quality of life of the population of the Republic of Armenia and to identify ways to improve them. To achieve this goal, the following **objectives** were defined:

- Study the theoretical principles and methodological foundations of quality of life;
- analysis of socio-economic indicators characterizing the quality of life of the population of the Republic of Armenia and their dynamics, and identification of possible ways to regulate them;
- study and comparative analysis of international standards and various approaches to assessing quality of life;
- identification of the structural features of income distribution and social stratification of the population of the Republic of Armenia, and presentation of regulatory mechanisms;
- identification of factors determining socio-economic changes in quality of life through multivariate analysis, highlighting existing issues that require management;
- development of a new model for assessing quality of life by constructing an index;

- assessment of the impact of factors determining the socio-economic development of Armenia on the quality of life of the population;
- development of key ways to improve the quality of life of the population of the Republic of Armenia, and state regulatory mechanisms, aimed at policymakers.

Object and subject of the study. The object of the study is the process of formation and management of the quality of life of the population of the Republic of Armenia, and the subject is the mechanisms of interaction of socio-economic factors influencing the quality of life of the population of the Republic of Armenia.

The scientific novelty of the dissertation. The results of the analyses have methodological, comprehensive and applied significance, the scientific novelty of which is reflected in the following main provisions:

- A model for joint management of inflation control and responsibility has been developed, based on significant deviations recorded by comparing inflation with the actual level stipulated by Article 4 of the Law of the Republic of Armenia "On the State Budget of the Republic of Armenia," in which case liability is established for persons who contributed to the emergence of this problem;
- a model has been constructed using regression analysis to forecast the growth rate of the Republic of Armenia's GDP in the absence of positive shocks to the Armenian economy after 2022 due to the Russian-Ukrainian war;
- by identifying commonalities and differences between cities grouped through cluster analysis, driven by differences in the consumption of goods and services and price indices, a differentiated approach to territorial development policy was examined as a management mechanism aimed at creating jobs and increasing economic activity in cities within the low-cost cluster;
- a quality of life index was developed, based on 24 indicators selected from three areas, combining various methodological approaches most commonly used internationally and in the Republic of Armenia. The index can be used to assess the quality of life of the population of both the Republic of Armenia and the 100 countries participating in the study (subject to changes in weighting factors).